Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի
մարզի «Նշավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրակության (7 դասաժամ), հասարակագիտության (10 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), մաթեմատիկայի(15 դասաժամ), Իմ հայրենիքը (2 դասաժամ), աշխարհագրության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած
հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը
կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր
մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ
փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը
վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 5-ից մինչեւ սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արարատի մարզի Նշավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նշավան, Շիրազի 58:
Տեղեկությունների համար զանգահարել՝
(094) 160797 հեռախոսահամարով: